ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոտայքկոշ ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	Բաճկոն–տաբատ կեպիով՝ կիսաբամբակյա, գունաքողակող: Բաճկոնը ոստիկանական գունաքողարկող ոստիկանական կտորից՝ 51% բամբակ 49% պոլիէսթեր APT.-4c5-KB, 210գ մակերեսային խտությամբ, պատկերը-4735/1, աստառը՝ սև կամ մուգ բամբակյա գործվածքից: Կենտրոնում տեղադրված պլաստմասե շղթայով, մեկ առանձին կտորից գոտեմասով: Թևքերի թեզանիքը կոճկվում է 2 կոճակով: Բաճկոնի առաջամասերի ներքևում մշակվում է թեք ներկարված շղթայով կամ կպչունակով փակվող գրպաններ: Կրծքամասում արտաքին ձևավոր կափույրով, կոճակով կոճկվող գրպաններով, խորությունը՝ գրպանի վերին հատվածից մինչև խորքը ոչ պակաս 25սմ-ից: Բաճկոնի օձիքը հետծալված: Բաճկոնի կողային մասերը ունի 12 – 18 սմ երկարությամբ առաձգական ժապավեն: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է ««POLICE»» (3սմ լայնությամբ, 12սմ երկարությամբ) մակագրությամբ, թիկունքին՝ ««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ՁՈՐՔԵՐ»» (8սմ լայնությամբ, 29սմ երկարությամբ) մակագրությամբ կտորներ (սև երանգի կտորի վրա ասեղնագործված)՝ կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան, իսկ աջ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի թևքանշան: Թևքանշանները ասեղնագործած՝ կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Ուսադիրները գունաքողարկվող կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ՝ վրադիրներով: Ձախ գրպանի վերևի մասում 2 սմ բարձրության վրա կարվում է 5 սմ լայնությամբ և 7 սմ

	երկարությամբ օվալաձև կպչունակ՝ կրծքանշանի համար: Ձախ կողմում ունի ծոցագրպան: Տաբատը – ոստիկանական գունաքողարկվող կտորից՝ 51% բամբակ 49% պոլիէսթեր՝ ուղիղ ուրվագծով: Գոտին՝ գոտեմակօղերով, կոճկվում է 2 կոճակներով և շղթայով: Արտաքին գրպանները թեք են: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Կեպին – բաղկացած է ոստիկանական գունաքողարկվող գործվածքով կոշտ հովհարից, կողամասերից և հատակից: Հետևամասում առաձգական ժապավեն՝ կտորով մշակված: Աստառը՝ բամբակյա կտորից: Առջևի կենտրոնական մասում ամրացվում է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության փոքր գլխարկանշանը: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով կամ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, արկղերի (պարկերի) մեջ մինչև 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը : Բաճկոնի վերևից 2-րդ կոճակի վրա պետք է կախած լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրվող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխ. պայմանի համարը, ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս - հասակային սանդղակը. 44/2 – 62/6, քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО Котайккош в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
6	